

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀՈՒՈՎՆԵՐԸ

Սեռական եւ սրական նոյովներ:

Տեսնենք այժմ ցուցականների կրկին ձևերը՝ սրա, դրա, նրա և սրան, դրան, նրան: Արեւմտեան աշխարհաբարի համար այս խնդիրը նշանակութիւն չունի, որովհետեւ սովորաբար գործ են ածուում՝ ասոր, ադոր, անոր, որոնք թէ տրական են և թէ սեռական. իսկ սա, դա, նա ցուցականների համար միայն սորա, դորա, նորա ձևերն են պատահում: Ինչո՞ւ են պահուած արեւելեան աշխարհաբարում այս տարբեր ձևերը, մինչ բոլոր բառերի սեռականն և տրականը ձևով նոյնացել են:

Գրաբարում սորա, դորա, նորա և յոգնակին սոցա, դոցա, նոցա իբրեւ անուան լրացում սովորաբար անփոփոխ են մնում՝ հայր նորա, հօր նորա, ի հօրէ նորա. բայց պատահում են այդ բառերի համար և ածականաբար գործածութիւններ՝ Զի նոցայոցն տիրեսցէ իշխանութեանց, որից երևում է թէ այդ ցուցականների սեռականներն ևս ըմբռնուել են իբրեւ ստացական ածական: Սակայն քանի որ այս վերջին տեսակի գործածութիւնը հազուադէպ է երևում, պէտք է ընդունել, որ հին ժամանակ մեր լեզուի մէջ դրանց իբրեւ ստացական ածական գործածութիւնն ընդհանուր չի եղել. մի բարբառի մէջ եթէ յաճախուած է եղել, ուրիշների մէջ չի եղել. այնինչ իմ, քո, իւր, մեր, ձեր ընդհանրապէս ստացական ածական են եղել: Որ արեւելեան աշխարհաբարում պահուում են սրա, դրա, նրա ձևերն իբրեւ սեռական, կարելի է գուցէ կարծել ուրեմն թէ դրանք ծագում են մի այնպիսի հին բարբառից, որի մէջ սորա, դորա, նորա ձևերն անունների վրայ դրուած ժամանակ իբրեւ ստացական ածական են ըմբռնուած եղել. ուստի այդ ձևերը մնացել են քարացած՝ միայն իբրեւ սեռական—ածական, ինչպէս են իմ, քո, իւր, մեր, ձեր ձևերը: Բայց մինչդեռ անձնական դերանունների տրականի համար պահուած են հին ձևերը՝ ինձ, քեզ ևչն, ցուցականների հին սմա, դմա, նմա ձևերի դուրս ընկնելովը հարկ է եղել մի առանձին տրական հոլովի և լեզուն առաջ է բերել այս գործածութեան համար սրան, դրան, նրան ձևերը:

Ի՞նչպիսի կազմութիւն ունին այս վերջին ձևերը: Մառն իւր քերականութեան մէջ (եր. 140) մի ծանօթութեամբ ա-

սում է թէ սրան, դրան, նրան տրականների վերջի և տառը յօդ է, որ աւելացել է սրա, դրա, նրա—սորա, դորա, նորա սեռականների վրայ: Այս տեսութեամբ ուրեմն պէտք է ընդունել, որ ինչպէս անունների վերջից, երբ որոշեալ են և տրական են, աւելանում է և յօդը,—մինչդեռ նոյն ձևերն իբրև սեռական ածականաբար դործածուելով անյօդ են մնում,—այնպէս և սրա, դրա, նրա ձևերն իբրև սեռական անյօդ են մնում, բայց իբրև տրական, որովհետև որոշ են, ստանում են և յօդը: Ըստ ինքեան այս տեսութիւնը անհաւանական չէ. որովհետև մեր լեզուի մէջ անսովոր երևոյթ չէ դերանունների հոլովական ձևերի վրայ և յօդի աւելանալը. դրական լեզուի մէջ անգամ սա, դա, նա դերանունների ներքոյականի վրայ երբեմն և յօդ է գրւում՝ նրանումն է, սրանումն է, դրանումն է: Իսկ բարբառների մէջ սրա—սրան ձևի նմանը գտնում ենք վիւ (=ոյր) ձևի մէջ, որ իբրև տրական գործ է ածւում և յօդով. վի՞ր լաճն է, բայց վի՞րը տուիր:

Բայց մենք այդ ձևերի վերջի և տառը ոչ թէ նոր աւելացած յօդ ենք համարում, այլ հոլովակերտի մաս, որ իբրև յօդ է ըմբռնուել: Ինչպէս նոյն արևելեան աշխարհաբարի բարբառների մէջ իրա և իրան ձևերը երկուսն էլ ծագում են հին սեռական—տրական իւրեան ձևից, միայն իրա ձևի մէջ վերջի և տառը դուրս է ընկել (չմտ. աղջկան, աղջկայ. կնկան, կնկայ. օրուան, օրուայ ևն),—նոյնպէս և սրա, դրա, նրա ձևերը ծագում են սրան, դրան, նրան ձևերից, և ոչ ընդհակառակն: Իսկ սրան, դրան, նրան—սորան, դորան, նորան կրկին հոլովուած ձևեր են. այն է՝ նախնական սեռականի վրայ աւելացել է անուանական հոլովման սեռական—տրականի նոր կազմուած եան—ան, ա(յ) հոլովակերտը, ճիշտ ինչպէս նոյն ձևով կրկին հոլովուած է իւրեան—իրան, իրա: Լեզուն ապա գործածութեան տարբերութիւն է գրել սրա, դրա, նրա և սրան, դրան, նրան ձևերի մէջ: Այս տարբերութեանն իբրև հիմք ծառայել է այն, որ անունների նմանութեամբ՝ տրականի համար վերջի և տառը իբրև յօդ ըմբռնուելով պահուել է, իսկ սեռականի համար յաակացուել է առանց և-ի ձևը: Ինչպէս ասոււմ է իրա գիրքը, բայց իրան տուի, նոյնպէս և նրա գիրքը, բայց նրան տուի: Այսպէս և աղջկան—աղջկա(յ) ձևերից առաջին մէջ և տառն արդէն իբրև յօդ է ըմբռնուում, և ասում ենք՝ Այս աղջկայ գիրքը, մի որ և է աղջկայ տալ և ոչ՝ Այս աղջկան գիրքը, մի որ և է աղջկան տալ: Բայց թէ վերջի և տառը նոր աւելացող յօդ չէ, այդ պարզ երևում է միւս հոլովների կազմութիւ-

նից, որոնց մէջ և տառը մնում է՝ նրանից, նրանով, իրանից, իրանով, ինչպէս և յոգնակին՝ նրանք, նրանց,—այսպէս և աղջկանից, աղջկանով¹։

Այսպէս ուրեմն ցուցականների կրկին ձևերը մի և նոյն հոլովական ձևն են, միայն վերջում և ունեցողները, անուանական հոլովման ազդեցութեան տակ, իբրև տրական են գործածւում, մինչ առանց ն-ի ձևերը սովորաբար իբրև սեռական են բանում։ Սովորաբար ենք ասում, որովհետև այս ձևերը երբեմն գործ են ածւում և տրականի իմաստով յատկապէս այն ածականների հետ, որոնք գրաբարում գոյականաբար գործածուելով տրական խնդրի փոխանակ առնում են ստացական ածականներ կամ սեռական. աշխարհաբարում այս գործածութիւնը սակայն կայ և այնպիսի ձևով, որ սրա, գրա, նրա ձևերն իբրև տրական են մտածւում. Օրինակ՝ . . . Նրա նման կլկլացնի (Պառօ. Սօս և Վարդ. եր. 144)։ Միեթար Գօշը հիմնուելով քրիստ. կրօնի վրայ՝ տալիս է նրա համեմատ քացատրութիւն։ Ժառանգողն իրաւունք ունի . . . դրա համեմատ իր կամքը յայտնելու (Ազգ. Հանգէս XVI, եր. 125, 129)։ Այսպէս և՛ Գու էլ նրա նման մի մարդ ես։ Նրա վայել պատրաստութիւն էին տեսել։ Նրա նման քաջասիրտ երիտասարդը։ Դրա համաձայն ևլին։ Բարբառների 2, հազուադէպ և գրական լեզուի մէջ առանց ն-ի ձևերը գործ են ածւում իբրև տրական և ուրիշ դէպքերում, ինչպէս՝ «Միծեռնակ, երգի մէջ «Երբ տեսնես դու նորա, ինձնից շատ բարեւ արա», կամ Գամառ—Քաթիպայի հետևեալ տողերի մէջ. «Տեսայ Աւարայր սարսափած ահից, Անթիւ զօրք նորա տիրել էր Պարսից»։

1 Սրան, դրան, նրան=սորան, դորան, նորան=* սորեան, * դորեան, * նորեան ձևեր մեր հին լեզուի մէջ մեզ յայտնի չեն. այլ միայն սորա, դորա, նորա=սորայ, դորայ, նորայ, Իսկ թէ իւրեան ձևի հետ եղել է իւրայ=իրա, այդ երեւում է իւրայոց, իւրայովք ելն, հոլովական ձևերից։

2 Օրինակ՝ Տ. Նաւասարդեան. Հայ ժող. Հեքիաթներ. 7 ըզ զիրք. Խրիմի բարբառով հեքիաթների մէջ գտնում ենք նաւա (=* նաւա. որից եւ նորա) ձևը թէ իբրեւ տրական եւ թէ իբրեւ սեռական. Շինտը ես նաւա փնտռելու կերթամ, Նաւա առնելու էկիլ իմ, Խարթան խուշը նաւա մէկ ծի տուից. նաւա շատ խրատից, Նաւա ասից,—նաւա ճարը. նաւա ձեռքէն ելն, Արեւմտեան զրական լեզուի մէջ եւս նորա զրոգները, Թէպէտ հազուադէպ, այս ձևը գործ են ածում եւ իբրեւ տրական, բայց ձեռքի տակ օրինակ չունինք։

Եղբակացութիւնը պարզ է: Եթէ սրան, դրան, նրան ձեւերի վերջի ն տառը յօդ է, ինչպէս Մառը դնում է, ապա կայ միայն մի ընդհանուր հոլովական ձև սեռականի և տրականի համար՝ սրա, դրա, նրա—սորա, դորա, նորա, որ հին սեռականն են, բայց այժմ ստացել են և տրականի իմաստ. միայն իբրև տրական գործածուած Ժամանակ, որովհետև միշտ որոշ են, հետևում են անուններին և յօդ առնում: Հոլովման շարքի մէջ մնում են ուրեմն սրա, դրա, նրա ձևերը, և շարահիւսութեան մէջ պէտք է բացատրել թէ տրական գործածութեան Ժամանակ սովորաբար ն յօդով են բանում, ինչպէս որ յարաբերականը, որի հոլովական ձևն է որի, բայց իբրև տրական լինում է սովորաբար յօդով՝ որին:— Իսկ եթէ այդ զոյգ ձևերը՝ նրա—նրան ևչն, ինչպէս կարծում ենք, իրարուց անբաժան ձև են, ինչպէս իրա—իրան, հոլովման շարքի մէջ պէտք է դնել զոյգ իբրև մի ընդհանուր հոլով, ինչպէս դնում ենք՝ աղջկան—աղջկայ, կնկան—կնկայ ևչն, և ապա դարձեալ շարահիւսութեան մէջ բացատրել թէ նրան ձևը, վերջի ն տառի իբրև յօդ ըմբռնուելովը, գործ է ածւում իբրև տրական, իսկ նրա ձևն իբրև անյօդ կարծուած ձև՝ սովորաբար իբրև սեռական է բանում: Երկու դէպքում ևս սեռականի և տրականի ձևական զանազանութիւնը վերանում է:

Լեզուն ուրեմն ցուցականների սեռական և տրական հոլովների նոյնացման մէջ ևս բացառութիւն չի թողել:

Այժմ հարց է՝ եթէ ձևով,—ձևով ենք և ոչ պաշտօնով,—այսպէս բոլորովին նոյնացել են մեր սեռական և տրական հոլովները, արդեօք պէտք է, որ մեր աշակերտները սերնդէ սերունդ կրկնեն՝ սեռական՝ քաղաքի, տրական՝ քաղաքի: Եւ ի՞նչ գործնական նշանակութիւն ունի այդ կրկնելը: Արդեօք կրկնելով սովորում են սեռականը տրականից տարբերել՝ առանց շարահիւսութեան օգնութեանը դիմելու: Անշուշտ ո՛չ: Այս բանին համոզուած կը լինին Պալասանեանի հետ և մեր բոլոր փորձուած վարժապետները: «Այս նոյնավերջ հոլովները միմեանցից որոշելու մի հնարք կայ—քննել թէ նրանցից իւրաքանչիւրը ի՞նչ պաշտօն է վարում»: Այս պատճառով գրեթէ բոլոր քերականութիւնների մէջ կը գտնէք դրած. «Սեռականը տրականէն զանազանելու գիւրին կերպն օա է.—եթէ գոյականի վրայ ինկած է՝ սեռական է, իսկ եթէ բայի վրայ՝ տրական է» (Այտն. եր. 94): «Սեռական և տրական հոլովներուն ձևերը նոյն ըլլալով, պէտք է դիտել որ սեռական հոլով յատկացուցիչը միշտ գոյականի մը կը վերաբերի . . . մինչ տրական

հոլովը բայի մը կը վերաբերի» (2. Հ. Ասատուր. եր. 117) :

Ես չեմ կարող մոռանալ տարիներ առաջ տեղի ունեցած մի քննութիւն. ոտորին դասարանի աշակերտին ստիպում էին կարդացած յօդուածի մէջ որոշել հոլովները, և նա կարուեցաւ, որովհետեւ չէր կարողանում սեռականը տրականից տարբերել և ոչ հայցականն ուղղականից ու տրականից: Բայց ինչո՞ւ էր մեղաւոր աշակերտը. նա սովորել էր լուի հոլովել և այն, որ սեռական—տրական իրար նման են. բայց չէր սովորել հոլովները շարահիւսութիւնը, նրանց կատարած պաշտօնը խօսքի մէջ, նրանց ցոյց տուած դանդաւան յարաբերութիւնները,—և ահա՛ ստիպում էին նրան՝ առել հացի ձևը սեռական է, թէ՛ տրական: Ո՞ր մէկը մեզնից կարող է առանց շարահիւսական արժէքը կըշռադատելու, միայն ձևի վրայ հիմնուելով, որոշել սեռական և տրական հոլովները հետեւեալների մէջ. Մի վանքի պատկանած կալուած, — Մի վանքի կալուած: Նա տէր եղաւ շատ կալուածների, — Նա շատ կալուածների տէր եղաւ: Նա հայր է շատ զաւակների, — Նա շատ զաւակների հայր է: Նա շատ մարդկանց բարեկամ է, — Նա բարեկամ է շատ մարդկանց: Այս տունը մի հարուստ մարդու է, — Այս տունը մի հարուստ մարդու է պատկանում: Գերի մի՛ լինիր կրֆերի, — կրֆերի գերի մի՛ լինիր: Այս երեխաները մի հասակի են, — նրանք էլ քո հասակին են, — Այս մի հասակի երեխաները: Առանց հացի, եղբօր համար, որդուդ պէս լին:

Ես մի անգամ մի հայերէն և ռուսերէն քաջ իմացող բանասէրի և լեզուի ուսուցչի ասացի այս խօսքը. «Ես այս ձին հարիւր մանէթի առայ», և հարցրի թէ ի՞նչ հոլով է հարիւր մանէթի: Պատասխան տաացայ թէ սեռական է: — Ինչո՞ւ: — Որովհետեւ արժէք ցոյց տուող բայերը՝ գնել, առնել, ծախել ևլն. սեռական են առնում շատ լեզուների մէջ: — Բայց մի կողմ թողնենք այդ օտար լեզուները և ենթադրենք թէ այդ կանոնը չգիտենք, ի՞նչպէս իմանանք, որ «հարիւր մանէթի» սեռական է և ոչ տրական: Հարկ եղաւ և յօդին դիմելու, և ես առացի. «Այս մանէթին հաց առայ» իսկ այն մանէթին՝ միս»: Ուրեմն և յօդն էլ վրան եկաւ: Բայց և այնպէս իմ խօսակիցը մնաց այն կարծիքին թէ սեռական է, իսկ ես չհամոզուեցի և մնացի այն կարծիքին թէ տրական է: Պաշտօնականը (եր. 214) գրում է թէ «սեռական հոլով են առնում առնելու և տալու բայերը». Հայրս տաւ մանէթի վրայս գնեց»: Բազրատունին նոյնպէս (եր. 301) գնել, վաճառել ևլն բայերի խնդիրը սեռական է գնում, — վաճառել աւելի քան երեքհարիւր դահեկանի, քա-

նոյ վաճառեցեր զայդ: Բայց Այանեանը, (եր. 102) և Ասատուրը (եր. 108) արահան հոլով են դնում ծախել, գնել, վաճառել բայերի խնդիրը,—Այս դերքը հինգ զրուշի գնեցիւ շինդ դահեկանի վաճառել: Քսան դենարի կուտային:

Այսպէս վարժապետներն անգամ երբեմն դժուարանում են սեռականը տրականից տարբերել և հարկ է լինում ն յօդին գիմելու կամ մի ծանօթ օտար լեզուի. բայց օտար լեզուները և նոյն իսկ ն յօդը, որի գործածութիւնը բաւական մեծ ազատութիւններ ունի, չեն կարող անսխալ առաջնորդ լինել: Եւ վերջապէս նոյն իսկ մեր յայտնի քերականներն էլ շփոթում են սեռական և տրական հոլովները: մէկը սեռական է դնում այն, որ ուրիշը տրական է համարում: Ի՞նչ անէ ուրեմն աշակերտը:

Պէտք է, կարծում ենք, մեր քերականութիւնը կազմել մեր լեզուի համեմատ և ոչ թէ ընդօրինականութիւն անել օտար լեզուների քերականութիւնների, որոնց բոլորի համար, ինչպէս մի գերմանացի լեզուագէտ գրում է, լատիներէն լեզուն Պրոկրստէսի անկողինն է եղել, որի վրայ նոր լեզուների քերականութիւնները չափելով՝ ծայրատել են կամ բռնի կերպով քաշքշելով երկարացրել: Եթէ մեր լեզուի մէջ սեռական և տրական հոլովները մի ընդհանուր ձև ունին, ապա և այդ երկուսը մի ընդհանուր հոլով են ե ոչ թէ երկու տարբեր հոլովներ: Ինչպէս որ կոչականը դուրս է ձգուած հոլովների ուսմունքից: հայցականը պէտք է դուրս ձգել, որովհետեւ չունի իւր առանձին ձևը,—այսպէս և սեռական և տրական հոլովները պէտք է մի ընդհանուր հոլով գնել, քանի որ այդ երկուսը ձևով մի հոլով են, ինչքան էլ այդ մի ձևը տարբեր տարբեր յարաբերութիւններ ցոյց տալու համար գործածուի: Այն ինչ որ ուրիշ լեզուների մէջ երկու հոլովական ձևով, երկու հոլովով է արտայայտուում, մեր աշխարհաբարի մէջ մի ձևով, մի հոլովով է առուում. և ինչո՞ւ պէտք է ուրեմն հակառակ մեր լեզուի կազմութեանը՝ «բռնի կերպով քաշքշելով երկարացնենք» մեր հոլովների ուսումը և աշակերտների բանը դժուարացնենք, ինչ է թէ ուրիշ լեզուների մէջ առանձին առանձին սեռական տրական հոլովներ կան: Բայց ուրիշ լեզուների մէջ կարող են ուրիշ շատ հոլովներ էլ լինել, ուրեմն պէտք է այդ էլ ստեղծենք մեր քերականութեան մէջ: Միթէ մեր քերականութիւնն ուրիշ լեզուներին համար է շինուում, և հայոց լեզուի քերականութիւնը սովորում է հայ աշակերտը օտար լեզուների կազմութիւնը հասկանալու համար: Ստարադգի մարդու համար, որի մայրենի լեզուի մէջ կան սեռական

և տրական հոլովներ, անշուշտ հայերէն սովորելու մի հեշտ միջոց կը լինի անմիջապէս տեսնել սեռ. տրակ. քաղաքի, այսինքն երկու հոլովի վերածած մի հոլովը. և եթէ մենք ռուսի համար կաղմէինք մի հայերէնի քերականութիւն, մեր այդ մի ձևի դիմաց ոչ միայն սեռական և տրական, այլ և նախադրական—предложный կը գնէինք, քանի որ ռուսերէնի այդ հոլովի պաշտօնն էլ հայերէնում մի և նոյն ձևն է կատարում: Բայց այդ կը լինէր օտարազգու համար յարմարեցրած մի քերականութիւն. իսկ հայի համար յօրինած հայերէնի քերականութեան մէջ մի հոլով պիտի գնէլ և յատկապէս տրական հոլով, իսկ սեռականը նրա գործածութիւններէն մէկը միայն համարել:

Ինչո՞ւ այդ մի ընդհանուր հոլովը տրական պիտի կոչել և ոչ սեռական կամ մի նոր ընդհանուր անունով: Նոր տերմինն անշուշտ այն առաւելութիւնը կունենար, որ միակողմանի չէր հասկացուիլ. մինչ սեռական և տրական տերմինները միակողմանի են: Սեռական ասելով, քանի որ հին և օտար լեզուների քերականութիւնների վարժուած ենք, միշտ հասկանում ենք այդ ընդհանուր, ասենք, 2-րդ հոլովի մի որոշ գործածութիւնը միայն, երբ այդ հոլովով գոյականը դառնում է մի ուրիշ գոյականի լրացում. իսկ տրական ասելով հասկանում ենք նոյն հոլովն իբրև խնդիր բայի և ածականի: Արդ հասկանալի է՝ այսպէս վարժուած մարդկանց համար շատ խորթ կը հնչի, օրինակ, պարտէզի դուռը կապակցութեան մէջ պարսեզի ձևը տրական կոչել. մինչ նոր տերմինը վերլուծութեան ժամանակ չէր հակասիլ մեր այս հին ըմբռնումին. մենք հոլով որոշելիս կասէինք պարսեզի 2-րդ հոլով է և ապա շարահիւսութեան մէջ կը բացատրուէր, որ այդ 2-րդ հոլովը գործ է ածուած իբրև անուան լրացում (սեռական) թէ՛ իբրև բայի և ածականի լրացում (տրական): Բայց հոլովներն մէջ նոր տերմինն իբրև այդպիսին ինքն ըստ ինքեան խորթ է, և եթէ պէտք է մի նոր խորթութեան վարժուել, մենք աւելի կը գերադասէինք փոխանակ նոր տերմին մտցնելու՝ եղած տերմիններից տրականի իմաստն ընդարձակել, լաւ ևս ասած եղած միակ հոլովական ձևը տրական կոչել, իսկ սեռականը համարել նրա գործածութիւններից մէկը: Անշուշտ մի ժամանակ շատ խորթ էր հնչում և կոչականը համարել ուղղականի գործածութիւններից մէկը. բայց ժամանակն այդ խորթութիւնն արդէն հարթել է:—Կան քերականներ որ հոլովներն անուանում են թուերով՝ 1-ին հոլով, 2-րդ հոլով, 3-րդ հոլով ևւն: Այսպիսի կոչումներով ինքն իրեն

նոյնանում են մեր սեռական և տրական հոլովները՝ իբրև մի 2-րդ հոլով, քանի որ միևնոյն ձևն ունին, և վերանում է տերմինոլոգիայի այս ճղճիմ խնդիրը: Բայց այդպիսի կուշումներն ընդհանուր ընդունուած և յարմար չեն:

Բայց ինչո՞ւ պէտք է եղած տերմիններից տրականն առնել և ոչ սեռականը. կարող են ասել—և եղել է մեզ բերանացի ասող—թէ սեռականի գործածութիւնն աւելի շատ է քան տրականինը, ուստի աւելի յարմար կը լինի սեռականը պահել և տրականը համարել նրա շարահիւստական գործածութիւններից մէկը: Այս առարկութիւնը հիմնաւոր չէ: Նախ տրականի իմաստով գործածութիւնը, հետն առած և հայցականի իմաստով տրականինը, սեռականի գործածութիւնից պակաս չէ: Ապա տրականը պահելու համար կան իրական հիմունքներ:

1. Դերանունների մէջ տրականից են կազմուած միւս հոլովները և ոչ սեռական համարուած ձևից. ինչպէս ինձ-նից, քեզ-նից, ինձ-նով և ըն:

2. Եթէ սեռական տերմինը պահենք, ինձ, քեզ, մեզ, ձեզ, սրան, դրան, նրան ձևերը չեն կարող դրուել հոլովներէ մէջ, քանի որ դրանք իբրև սեռական չեն գործածուած. մինչդեռ եթէ տրականը պահենք, իմ, քո, իւր, մեր, ձեր,—ինչպէս յետոյ կը տեսնենք նաև՝ սրա, դրա, նրա,—կառնուեն ստացական դերանունների մէջ, կամ եթէ ուղենանք, նոյն իսկ տրականի առիկ կարող են դրուել, քանի որ, ինչպէս տեսանք, այդ ձևերն և իբրև տրական են գործածուած, թէպէտ սակաւագէտ:

3. Ինչքան էլ հայցականը դուրս ձգուի, բայց այդ հոլովի իմաստով գործածութիւնը պիտի բացատրուի. մենք չենք կարող ասել թէ անցողական բայերի հայցական սեռի խնդիրը դրուած է ուղղական և սեռական հոլովով, այլ ուղղական և տրական հոլովով, սրովհետև հայցականը տրականի նման է և ոչ սեռականի:

4. Սեռականը մի հոլով է, որ ածականի պաշտօն է վարում, այսինքն իբրև որոշող բառ կամ վերադիր (определение, die attributive Bestimmung) դրուած է մի գոյականի վրայ: Պալատանեանը (եր. 208 հտ.) պարզապէս գրում է թէ «սեռական յատկացուցիչը յարաբերական ածականի», և կամ «որական ածականի միտք ունի». նոյն է ասել՝ մօր օրհնութիւն և մայրական օրհնութիւն: Այսպէս և Բագրատունին (եր. 320,): Այստեանը (եր. 39) նոյնպէս բոլոր ստացական սեռականները դնում է իբրև ստացական ածականներ, «որ

ամենն ալ սեռականէ ուղղական եղած ածականներ են. և մինակ (առանց գոյականի) մնալով յօդ կառնուն և կըլլան գոյական», ինչպէս մարդու, զինուորի, Պետրոսի ևն: Եւ որովհետեւ սեռականի ոչ—ստացական իմաստով գործածութիւնը նոյնպէս ածական են դնում՝ անուանելով կամ սոսկ ածական, կամ «սեռական—ածական», կամ սեռականից կազմուած ածական, «սեռականի ձևով ածական», «իբր ածական գործածուած սեռական» (Պալատ. 208. Այտն. 110. Առատուր 108. 117. 119), —այդ սեռականը գառնում է ամբողջապէս մի հոլով, որ իբրեւ ածական, այսինքն վերադիր է գործածուած: Եւ այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ, ինչպէս տեսնենք, «սեռականը բայի խնդիր չէ, այլ անուան», և որ ածականներն ու բուն նախդիրները սեռական խնդիր չեն առնում, այլ տրական: Այժմ հարց է, —եթէ սեռականը մի հոլով է, որ մի միայն գոյականի վերադիր է գառնում և ձևով նման է տրականին, ինչո՞ւ պէտք է մենք այդ գործածութիւնը մի առանձին հոլով դնենք և ոչ թէ տրականի կամ, ասենք, 2-րդ հոլովի գործածութիւններից մէկը համարենք: Մեր լեզուն ունի մեր աշխարհաբարում հինգ հոլովական ձևեր. 1. ուղղական, 2. 2-րդ հոլով, 3. Բացառական, 4. Գործիական, 5. Ներգոյական: Արդ այս հոլովական ձևերը ոչ միայն բայի և ածականի խնդիր են լինում, այլ և անուան, այսինքն իբրեւ ածական վերադիր գրւում են անուան վրայ: Ներգոյական հոլովը միայն բացառութիւն է կազմում, և մենք ներքեւում կը տեսնենք զրա պատճառը:

1. ՈՒՂՂԱԿԱՆ.

ա, Պարոն Սմբատը, զօրավար Վարդանը, Վարդան զօրավարը, Զառեիս ձուկը ևն:
բ, Ոսկի ձկնիկ, փառ սիւտ, ձմեռ ժամանակ, պառ օր, հրեծ մարդ, սար տեղ ևն:

գ, Մի բաժակ ջուր, մի կաթիլ արտասուք, մի կոտ ցորեն, երկու քերթ թուղթ, մի գունդ զօք ևն:

դ, Խումբ խումբ մարդիկ, Տեսակ Տեսակ գրիչներ, փունջ փունջ ծաղիկներ ևն:

ե, Նոր Տեսակ երևոյթ, ամեն կերպ ջանք, վերին աստիճան յիմարութիւն, ոսկու գոյն գինի ևն:

2. 2-ՐԴ ՀՈԼՈՎ.

ա, Մօր օրհնութիւնը, եղբօր դրատունը, պարսկի դուռը:
բ, Դաշի ծաղիկ, ամառուայ փուշ, ձմեռուայ նուշ, քսան օտուայ հարս ևն:

դ. Արծաթի բաժակ, զինու բաժակ, երեխայի խելք, ցո-
րենի ալիւր ևլն:

դ, Շաքարի գլուխ, հացի փշրանք, փայտի բեռ ևլն:

ե, Երկրորդ կարգի աշակերտ, յետին աստիճանի յիմարու-
թիւն, մի հասակի երեխաներ ևլն:

3. ԲԱՑԱՌԱԿԱՆ.

ա, Փայտե աթոռ, կտակ հագուստ, Խրիմի մորթուց դռակ,
կանաչ մահուդից շուխայ ևլն:

բ, Երկու կողմից թշնամութիւն, չորս բոլորից յարձակում:

4. ԳՈՐԾԻԱԿԱՆ

ա, Կարնով ոչխար, աղ ու հացով մարդ, պոչով սուտ,
քաղցր հայեացքով, խարտեաշ մագերով աղջիկ ևլն:

բ, Հօտերով ոչխար, բեռներով ցորեն, դասով թուղթ ևլն:

Մեր հոլովների գործածութեան մասին այս էլ պիտի դի-
տել, որ բոլոր հոլովներն էլ, երբ անուան վերադիր են, չեն
ստանում ն յօդք: Այս ընդհանուր յատկութեանը հետևում է և
2-րդ հոլովը: Գրաբարում, յայտնի է, ն յօդք դրւում է սովորա-
բար սեռականի վրայ՝ տէր պարտիզին. արևմտեան աշխարհա-
բարում յօդք սովորաբար կրկնւում է սեռականի և իւր գո-
յականի վրայ՝ պարտէզին տէրը. իսկ արևելեան աշխարհաբա-
րում ն յօդք դրւում է միայն սեռականի անուան վրայ, իսկ
սեռականն ինքն անյօդ է մնում՝ պարտէզի տէրը: Ի՞նչ է ցոյց
տալիս այս, եթէ ոչ այն, որ մեր լեզուն դիմել է միատեսա-
կութեան. ինչպէս միւս հոլովները գործածուելով իբրև վերա-
դիր ածական՝ ն յօդ չեն առնում, դրանց նմանութեամբ և
2-րդ հոլովը իբրև վերադիր դադարել է յօդ առնելուց: Լեզուն
ուրեմն ոչ մի տարբերութիւն չի դնում բոլոր հոլովների իբրև
անուան վերադիր գործածութեան մէջ, որ ն յօդի նկատմամբ
բոլոր հոլովների այս գործածութեան մէջ միակերպութիւն է
առաջ բերել: Մենք սեռական հոլով վերադիրն ուրեմն մտա-
ծում ենք իբրև մէկը միւս հոլովներով առուած վերադիրներից:

Եթէ ուղղական, բացառական և գործիական հոլովները
կարող են բայի, ածականի և անուան խնդիր լինել և միաժա-
մանակ մի և նոյն հոլովը մնալ, ինչո՞ւ նոյնը չենք կարող ասել
և 2-րդ հոլովի համար. ինչո՞ւ պիտի այդ հոլովն իբրև բայի
և ածականի խնդիր տրական կոչուի, իսկ իբրև անուան
խնդիր՝ սեռական, և ոչ երկու դէպքում էլ տրական: Մենք ոչ
մի ուրիշ հիմք չենք տեսնում, բայց եթէ այն, որ օտար լեզու-
ներում (մատամբ և գրաբարում) այդ պաշտօնները կատարելու
համար կան առանձին հոլովներ առանձին ձևերով: Բայց մեր

լեզուի մէջ այդպիսի առանձին ձևեր չկան: Եւ վերջապէս սեռական հոլովն օտար լեզուների մէջ ոչ միայն գոյականի վերադիր է լինում, այլ և բայի և ածականի խնդիր. իսկ մեր սեռական ատածը միայն գոյականի վերադիր է: Եւ եթէ այդ մի հոլովական ձևը գոյականի վերադիր լինելու համար երկու պիտի բաժանուի, բայի և ածականի հետ դրուածը միայն տրական կոչուի, իսկ անուան վրայ դրուածը՝ սեռական, ինչու երկու չպիտի բաժանուի, օրինակ, և ուղղական հոլովը, որ նոյնպէս բազմազան կերպով իբրև վերադիր է գործածուում: Կարելի էր հիշել զիցուր «վերադրական» հոլով և այդ հոլովի տակ մտնել ուղղականի բոլոր կիրառութիւններն իբրև վերադիր, կամ «մակադրական» հոլով և դրա տակ հասկանալ գործիականի գործածութիւններն իբրև վերադիր: Մենք ոչինչ չէինք ունենալ առելու, եթէ սեռական տերմինի տակ հասկացուի, ինչպէս որ է՝ իրօք, այդ 2-րդ հոլովի գործածութիւնն իբրև անուան վերադիր: Բայց այս իմաստով սեռական բառը կը դառնայ ոչ թէ հոլովի անուն, այլ մի շարահիւսական տերմին, — և այդ կը լինէր այդ տերմինի բանաւոր գործածութիւնն աշխարհաբարում: Այսպէս և հայցական անունը կարելի է գործածել անցողական բայերի հայցական սեռի խնդրի համար, քանի որ հայցական հոլովի հիմնական գործածութիւնը հենց այդ է: Այս ձևով վարուելով մենք սեռական և հայցական հոլովները դուրս ձգած կը լինէինք, բայց միաժամանակ իբրև շարահիւսական տերմին պահելով հայցական և սեռական բառերը՝ դիւրութիւն տուած կը լինէինք աշակերտին դրաբարի և օտար լեզուների նոյն հոլովներն ըմբռնելու:

5. Սեռական տերմինն աշակերտի համար անհասկանալի է, և սեռականն իւր մէջ չի ամփոփում տրականի իմաստը, այսինքն սեռականի հիմնական նշանակութիւնից չենք կարող հանել տրականը և վերջինս նրա գործածութիւններից մէկը համարել, — մինչդեռ ընդհակառակն տրական տերմինը ոչ միայն հասկանալի է, այլ և այդ հոլովի հիմնական նշանակութեամբ մեծ մասամբ ըացատրուում է նաև սեռականն իբրև նրա գործածութիւններից մէկը: Տեսնենք այս վերջին կէտն, որ կարևոր է:

Որ լեզուի մէջ սեռական և տրական հոլովները ձևով նոյնացել են և այդ նոյնացումը այսօր մեր աշխարհաբարում կատարեալ է դարձել, — դա անպայման իւր հիմքը պիտի ունենայ մեր մտածողութեան եղանակի նոյնացման մէջ. կամ մենք սեռականն սկսել ենք մտածել իբրև տրական, կամ ընդհակա-

առին տրականն ենք մտածել նաև իբրև սեռական, որ այդ երկու հոլովն իրար տեղ են անցել: Նախ տեսնենք ուրեմն թէ ինչ են ցոյց տալիս իրենց հիմնական նշանակութեամբ մեր լեզուի մէջ այդ երկու հոլովը, սեռականն ու տրականը:

Հոլովների անուններն արդէն, բացի ուղղականից, ցոյց են տալիս իրենց հիմնական նշանակութիւնն ու գործածութիւնը: Ուրիշ լեզուների մէջ ուղղականը բաժանուած է երկու հոլովի՝ կոչական, որ գործ է ածուած մէկին ձայելու, կանչելու համար, և անուանական, որ գործ է ածուած 1, մի առարկայ խօսքից դուրս անուանելու համար. 2, իբրև անուն բայի (ենթակայ) և 3, իբրև ստորոգեալի անուն (Prädikatsnomen), որով և հասկանալի է այս հոլովի անուանական կոչումը: Բայց մեր ուղղականը միայն բառի ուղիղ ձևն է ցոյց տալիս առանց որոշելու հոլովի պաշտօնը, և ամեն անուն ուղիղ ձևով՝ է ուղղական: Հայցական հոլովը «ցոյց է տալիս գլխաւորապէս թէ մէկ առարկայ ուրիշ առարկայի գործողութեանն է ենթարկուած» (Պալաս. եր. 45), ուրիշ խօսքով դառնում է սեռի խնդիր (հայցական—խնդրական): Ներգոյականը ցոյց է տալիս մի բանի մէջ լինելը. Գործիականը այն գործիքը կամ միջոցը, որով մի բան լինում է, փոխաբերաբար՝ նաև միասնութիւն, հետք լինելը: Տրական հոլովը իւր հիմնական նշանակութեամբ ցոյց է տալիս մի խնդիր, որին տրուած, մատուցուած, մօտեցուած է մի բան, կամ փոխաբերաբար՝ ընծայուած, վերագրուած, վերաբերուած, պատկանում, պատշաճում է մի բան,—հակառակ Բացառական հոլովի, որ ցոյց է տալիս «ի բաց առնուել», առնել, հեռացնել, կամ փոխաբերաբար՝ ծագել, առաջ գալ, սերուել, սկսուել:

Ի՞նչ է նշանակում Սեռական բառը և ի՞նչ է ցոյց տալիս սեռական հոլովն իւր հիմնական նշանակութեամբ:—«Սեռական հոլովը ցոյց է տալիս թէ մէկ առարկայ ումն է կամ ինչից է առաջ գալիս, սերվում է», գրում է Պալասանեանը (եր. 45): Բայց այս բացատրութեան երկրորդ մասն աւելի յարմար է բացատրականին կամ այն լեզուների սեռականին, որոնց մէջ սեռականը և բացառականի իմաստ ունի:

Սեռական, genetivus, բառը բացատրում են gignere—ծնել, սերել բառից իբրև ծնող, սերող, որովհետև այդ հոլովից ծնւում, սերւում են միւս հոլովները. բայց այս բացատրութիւնը մեր աշխարհաբարի համար անպէտք է, քանի որ, ինչպէս տեսանք, մեր դերանունների մէջ միւս հոլովները կազմուած են տրականից՝ ինձ-նից, քեզ-նից ևւն: Այս իմաստով ուրեմն աւելի

շուտ տրականը «սեռական» պիտի կոչուի:

Այս նոյն բառի և մի երրորդ մեկնութիւն ևս genus—սեռ, տեսակ բառից, որովհետեւ սեռական հոլովը դրուելով մի տնուան վրայ՝ իբրեւ մի որակական ածական մի նոր սեռ, տեսակ է կազմում, ինչպէս՝ ծառ, ծիրանի ծառ. բաժակ, արծաթի բաժակ: Այս բացատրութիւնը յաւմար է հայերէնի սեռականին, բայց թողնւում է մեր քերականութիւնների մէջ, որովհետեւ ընդհանրապէս սեռի և տեսակի տրամաբանական բաժանումն անուշադրութեան է մասնւում. մենք չգիտենք մի քերականութիւն, որի մէջ պարզուած լինէր որակական ածականների սեռից նոր տեսակ կազմելու յատկութիւնը: Մի երեխայ որ չի հասկացել որակական ածականների այս տեսակարար պաշտօնը, նա չի ըմբռնիլ հարկաւ և այն թէ սեռական հոլովն այսպէս կոչւում է, որովհետեւ դա նոյն պաշտօնն է կատարում, ինչ որ մի որակական ածական: Մեր վարժապետներն այս բացատրութիւնը թողնում են, երևի աշակերտի խելքի համար անհասկանալի համարելով, թէպէտև նոյն աշակերտն ամեն օր առարկաները տեսակների է վերածում թէ դասերի ժամանակ և թէ դրսում՝ կեանքի մէջ: Դրա հետեանքն այն է լինում, որ սեռական հոլովի անունը մինչև վերջն էլ անհասկանալի է մնում աշակերտի համար, և այս գիտեն փորձուած վարժապետները:

Սեռականի վերջին բացատրութիւնն, ատացինք, յարմարւում է հայերէնին. բայց ոչ այն իմաստով, որ գործածուի իբրեւ ընդհանուր անուն՝ իւր մէջ ընդունելով և տրականը: Այդ բացատրութեամբ սեռականը միշտ վերագիր է,—և հայերէնում սեռականը միշտ էլ անուան վրայ է դրւում: Բայց «սեռական» տերմինը ոչ թէ այդ հոլովի՝ իբրեւ վերագիր գործածութիւնն է ցոյց տալիս ընդհանրապէս, այլ նրա բաղմամբ շնչանակութիւններից մէկը: Տեսակարար իմաստ ունի ոչ ամեն սեռական, այլ միայն անորոշ սեռականը և վերջինս էլ ոչ միշտ: Իսկ եթէ դերանունների սեռականն էլ վերցնենք,—և այս գէպքում պէտք է որ վերցնենք,—դերանունների համար այս բացատրութիւնը բնաւ չի յարմարւում: Բացի այդ՝ երեխաների համար միշտ մի հանելուկ կը մնայ թէ ինչ հոլով է այդ հոլովը, որ «սեռական» է կոչւում: որովհետեւ երբ դրւում է անունների վրայ, երբեմն տեսակ, սեռ է կազմում իբրեւ մի որակական ածական. և նոյն երեխան դարձեալ կը մտածի—և կը գտնուի միշտ սրամիտ երեխաներ որ այսպէս մտածեն—հապա ինչու ուղղականը, բացառականը, գործիականը նոյն-

պէս «սեռական» չեն. չէ՞ որ այդ հոլովներն ևս գրուելով աւանդական վրայ՝ նոյնպէս երբեմն տեսակ են կադմուս իբրեւ որակական ածական. ինչո՞ւ հացի գդալ, արծաթի բաժակ, թէյի բաժակ, ծիրանի ծառ, նոր տեսակի հագուստ կապակցութիւնների մէջ հացի, արծաթի, թէյի, ծիրանի, նոր տեսակի «սեռական» են, իսկ ոսկի ձկնիկ, տօն օր, նոր տեսակ հագուստ, արծաթէ բաժակ, պատուով մարդ, երկար պոչով գդալ ևլն. կապակցութիւնները մէջ ոսկի, տօն, նոր տեսակ, արծաթէ, պատուով, պոչով «սեռական» չեն,—չէ՞ որ որանք էլ գրուելով անուան վրայ նոր տեսակ են կադմուս իբրեւ մի որակական ածական: Իսկ ընդհանրապէս շատ բնական, պարզ և հասկանալի կը լինի, երբ նա սովորի թէ ինչպէս ուղղական, բացառական և գործիական հոլովները, բացի բայի և ածականի խնդիր լինելուց, իբրեւ խնդիր գրուած են և անուան վրայ, նոյնպէս և տրականը. ինչպէս ուղղական, բացառական և գործիական հոլովներն իբրեւ անուան վերադիր երբեմն որակական ածականի իմաստ ունին, երբեմն ոչ, կամ բուն բառով ասենք,—որ մեր քերականութիւնները մէջ ընդունուած չէ,—երբեմն դառնում են որակիչ և երբեմն սորոշիչ (qualificatif և détermitif)—նոյնպէս և տրական հոլովը. և վերջապէս, եթէ կուզէք, ինչպէս միւս հոլովները (բացի ուղղականից) անուններն առնուած են նրանց այն գործածութիւնից, սրով խնդիր են դառնում բայի, նոյնպէս և Զորդ հոլովի անունը: Լեզուն ինքը ստեղծել է հոլովների գործածութեան մէջ այս միակերպութիւնը և մենք ինչո՞ւ պէտք է ուղիղ ու կարճ ճանապարհը թողած, աւելորդ խորտ ու բորտ աշխատանք անենք:

Բայց մենք դեռ չիմացանք, թէ ի՞նչ է մեր սեռական հոլովի հիմնական նշանակութիւնը: Ինչքան էլ տարբեր կերպով բացատրեն «սեռական» տերմինը և յարմարեցնեն այդ հոլովի բազմազան գործածութեանը,—մեր քերականները հայերէնի սեռականի համար իբրեւ գլխաւոր և առաջին նշանակութիւն դնում են մի կիրառութիւն: որ բնաւ յարմար չէ «սեռական» տերմինին և աւելի շուտ կարելի էր կոչել «պատկանական» կամ «վերաբերական»: Պալատանեանը (եր. 208) գրում է. «Գոյական յատկացուցիչը (—սեռական հոլովը) ցոյց է տալիս գլխաւորապէս թէ մէկ առարկայ ումն է պատկանում կամ վերաբերում... երբեմն ցոյց է տալիս մէկ որակիցէ առարկայի որակիւթիւնը»: Իսկ Ա. յտնեանը (եր. 93) և Ասատուրը (եր. 108. 116 հտ.) գրում են. «Սեռական հոլովը կը գործածուի 1. իբր յատկացուցիչ. 2. իբր ածական»: Յատկացուցիչը անուն մ' է, որ ուրիշ ա-

նունի մը որուն ըլլալը կը ցուցնէ Յատկացեալն այն բառն է, որ յատկացուցչին կը վերաբերի Սեռական հոլովը բանի մը մէկուն վերաբերելը կը ցուցնէ»:

Մեր սեռականի առաջին և գլխաւոր նշանակութիւնն է ուրեմն ընել «յատկացուցիչ», կամ ինչպէս ասում են՝ «ստացական սեռական», այսինքն ցոյց տալ թէ մի առարկայ ում, ինչի՞ է յատկացում, պատկանում, վերաբերում, կամ ուրիշ խօսքով՝ ում ստացուածքն է (possession): Սեռականի այս գործածութիւնն այնքան կարեւոր է, որ Պալատանեանը ոչ միայն բոլոր սեռականներն անխտիր յատկացուցիչ է դնում, այլ և այդ անունով կոչում է նաև ածական վերադիրները. մինչդեռ միւս քերականները յատկացուցիչ անուն տակ հասկանում են միայն պատկանելութիւն, վերաբերութիւն ցոյց տուող սեռականը կամ ստացական սեռականը (genetivus possessivus): Բայց և միւս քերականները, ինչպէս և Պալատանեանը, այնքան երկրորդական տեղ են տալիս սեռականի ոչ ստացական իմաստով գործածութեանը՝ որ, ինչպէս տեսանք, հենց ածական էլ կոչում են, կամ «սեռական—ածական», կամ «սեռականի ձևով ածական», «իբր ածական գործածուած սեռական» . «սեռականէ—ածական»,—ուրիշ խօսքով ոչ-ստացական իմաստով սեռականներն առնում են իբրև սոսկ ածական (ինչպէս որ են իրօք շատ անգամ): Մնում է ուրեմն իբրև հիմնական նշանակութիւն մեր սեռականի համար նրա ստացական իմաստով գործածութիւնը:

Մ. Արեղեան.

